«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

Առարկան՝ Պատմություն

Հետազոտող ուսուցիչ՝ Արմինե Հովհաննիսյան

Ուսումնական հաստատություն՝ Առինջի Կ. Ծառուկյանի անվան միջնակարգ դպրոց

Երևան 2023

Բովանդակություն

1. Ներածություն……2
2. Ծնողների ներգրավվածություն երեխայի կրթության գործընթացում ……..5
3. Ընտանիք-դպրոց փոխազդեցության ժամանակակից ձևերն ու մեթոդները ……6
4. Համագործակցության սեփական փորձը ……8
5. Եզրակացություն ……9
6. Գրականություն……10

Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

Ներածություն

Յուրաքանչյուր երեխայի կրթության հիմնարար իրավունքն ամրագրված է ՀՀ օրենքներով, միջազգային պայմանագրերով և մի շարք ենթաօրենսդրական ակտերով : Կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման կարևորագույն գործոններից մեկը՝ ծնողների,աշակերտների և ուսուցիչների միջև համագործակցությունն է:Գիտենք, որ ընտանեկան միջավայրում տեղի է ունենում երեխայի առաջնային շփումը, դերային և վարքագծային կարծրատիպերի, արժեքային համակարգերի և աշխարհայացքի ձևավորումը: Առաջին հերթին ընտանիքն է հոգ տանում երեխայի անվտանգության և կարիքների մասին,կրթում ու դաստիարակում նրան,ապահովում հոգեբանական հանգստություն ու հարմարավետություն: Սակայն երբ երեխան դառնում է դպրոցական, դաստիարակման և կրթման գործընթացը տեղափոխվում է կրթական հաստատություն: Հատկանշական է,որ դպրոցական կյանքում ծագող խնդիրների նվազմամբ երեխայի վերաբերմունքի մեջ գերակշռող մաս են կազմում ընտանեկան միջավայրում ձեռք բերված սոցիալական դիրքորոշումները, որոնք նպաստում կամ խոչընդոտում են դժվարությունների դրսևորմանը այդ իսկ պատճառով ընտանիքի դերը երեխայի հոգեկան առողջության պահպանման գործում եղել և մնում է միշտ արդիական:

Շատ ուսումնասիրողների հետազոտություններ վկայում են, որ երբ երեխան սկսում է հաճախել դպրոց, ընտանիքի դերի կարևորությունը դրանով չի նվազում, և երբ ծնողների ներգրավվածությունը երեխայի կրթության կազմակերպման գործընթացում հասնում է նվազագույնի, ընտանիքը դուրս է մնում երեխայի կրթության հարցերով զբաղվող թիմի աշխատանքից:

Մեր ուսումնասիրության նպատակն է հետազոտությունների արդյունքների և սեփական փորձի հիման վրա ընդգծել ուսուցչի և սովորողի ընտանիքի միջև կապի դերն ու նշանակությունը,ներկայացնել ընտանիք-դպրոց փոխազդեցության ժամանակակից ձևերն ու մեթոդները:

Հետազոտության թեմայի արդիականությունը

Սույն հետազոտության արդիականության համար հիմք է հանդիսացել կյանքի՝ մարտահրավերներով լի ժամամանակակից շրջափուլում սովորողի կրթական կարիքների ապահովման շրջանակներում ծնող- ուսուցիչ կապի անհրաժեշտությունը, որն ունակ է մեծապես ազդել սովորողի ուսումնառության որակի բարձրացման վրա:

Դասարաններում աշակերտների մեծաթիվ լինելը, ժամանակի սղությունը հնարավորություն չի տալիս անհրաժեշտ ուշադրություն դարձնել, ժամանակ տրամադրել այս կամ այն աշակերտի գիտելիքների հիմնովին ստուգմանը՝ անկախ նրա առաջադիմությունից, ակտիվությունից և այլն:

Ուստի այստեղ կարող ենք առաջ քաշել ուսուցիչ – ծնող ճիշտ փոխհարաբերության մասին զանազան մեթոդների ու ձևերի կիրառմամբ:

Հետազոտության խնդիրը

- ✓ Ինչպե՞ս ներգրավել ծնողներին տարրական, միջին և ավագ դպրոցներում ուսումնադաստիարակչական խնդիրների լուծման գործընթացում:
- ✓ Ինչպե՞ս ներգրավել ծնողներին իրենց երեխաների կրթությանը վերաբերող հարցերի մասին որոշումների կայացման :

« Ինչու՞ ես ատեմ երեխային այսօրվա վատի համար, ես նրան կսիրեմ այն լավի համար, ինչը նրա մեջ դաստիարակելու եմ վաղը»:

1. Ծնողների ներգրավվածություն երեխայի կրթության գործընթացում

Երբ ծնողը ներգրավված է երեխայի կրթության գործընթացում, աշակերտն ունի ավելի բարձր առաջադիմություն, քննությունների և թեստերի ավելի լավ արդյունքներ: Միևնույն ժամանակ բարելավվում է հաճախման ցուցանիշը, աշակերտի մոտ զարգանում են սոցիալական հմտությունները, և նրա վարքը դրական է դառնում ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Սրանք այն կարևոր գործոններն են, որոնք ազդում են աշակերտի վրա ինչպես դպրոցում սովորելիս, այնպես էլ ապագա մասնագիտական գործունեության ընթացքում: Սակայն, ինչպե՞ս կարող են

ծնողները արդյունավետ ներգրավվել դպրոցական կյանքին, և ինչպես կարող է դպրոցը նպաստել նրանց ներգրավվածությանը: Իրականում, ի՞նչ է նշանակում «ծնողների ներգրավվածություն»:

«Ծնողների ներգրավվածություն» տերմինը նշանակում է միասնական և անընդմեջ պատասխանատվություն աշակերտի հաջողությունների և ուսման բարելավմանը ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Այն միավորում է ծնողներին և ուսուցիչներին, որպեսզի նրանք միահամուռ ուժերով նպաստեն աշակերտի ակադեմիական առաջադիմության բարելավմանը:

«Ծնողների ներգրավվածություն» նշանակում է ծնողների մասնակցություն կանոնավոր, բազմակողմանի կապերում, աշակերտի ուսման գործընթացում և դպրոցի այլևայլ միջոցառումներին:

Դպրոցի կյանքում ծնողների ներգրավվածությունը առանձնահատուկ նշանակություն ունի աշակերտների հաջողության համար: Ինչպիսին էլ որ լինի ընտանիքի սոցիալ-տնտեսական կարգավիճակը, ծնողի մասնակցությունը երեխայի կրթության գործընթացին, աշակերտի զարգացման վրա մեծ ազդեցություն է գործում: Հետազոտումների համաձայն, աշակերտները, որոնց ծնողները ակտիվորեն մասնակցում են կրթական գործընթացին, ավելի լավ արդյունքների են հասնում. Ստանում են ավելի լավ գնահատականներ, ունեն ավելի բարձր ակադեմիական ձեռքբերում և ավելի որակով կատարած տնային առաջադրանքներ, նրանց հաճախման ցուցանիշն ավելի բարձր է և աչքի են ընկնում դրական վարքով, բարեհամբույր են դպրոցի նկատմամբ և ունեն սեփական աձի և հնարավորությունների նկատմամբ հավատ:

Ծնողների ներգրավվածությունը դրական է անդրադառնում նաև կրթական հաստատության վրա:

Ուսումնական գործընթացում ծնողների ակտիվությունը հարստացնում է դպրոցի կուլտուրան և նպաստում է նրա զարգացմանը: Այսպիսով, ավելի լավ արդյունքների հասնելու համար դպրոցը և ուսուցիչը պետք է հետաքրքրված լինեն ծնողների հետ ակտիվ համագործակցմամբ:

Ծնողների հետ ակտիվ համագործակցումն օգնում է ավելի ինքնավստահ դառնալուն: Ուսուցչի մոտ հանդես է գալիս ավելի հարգանք սեփական մասնագիտության նկատմամբ: Նրանք ավելի են բավարարված իրենց մասնագիտությունից և նրա արդյունքներից: Ծնողների ներգրավվածությունը բարձրացնում է ծնողի և ուսուցչի միջև կապվածության որակը, ինչը օգնում է ուսուցչին պարբերաբար ստանալ սպառիչ տեղեկություն երեխայի մասին: Սովորողի անհատական կարիքների կարգավորումը ուսումնական գործընթացի կողմից ուսուցչին ցանկալի արդյունք կտա:

2. Ընտանիք-դպրոց փոխազդեցության ժամանակակից ձևերն ու մեթոդները

Կրթական համակարգերի և համաշխարհայնացման ու հասարակության տեղեկացվածության փոխազդեցությամբ պայմանավորված՝ ընտանիք-դպրոց փոխազդեցությունը նոր իմաստ է ձեռք բերում, ինչն էլ իր հերթին թելադրում է ծնոների դերի այլ դրսևորում: Կրթական համակարգում ընտանիքը պետք է լինի ոչ միայն սպառող և պատվիրատու, այլև՝ դպրոցի գլխավոր գործընկերը երեխայի անձի ինքնաիրացման հարցում, ուսումնադաստիարակչական գործընթացի ակտիվ մասնակիցը, որն առավել բարդ է ավանդական ուսուցման պայմաններում: Ժամանակակից մանկավարժը պետք է հաշվի առնի սովորողի

ընտանիքում առկա գործոնների ամբողջությունը, որոնք կարող են ազդել երեխայի կրթության և անձի ձևավորման վրա:

Ընտանիք- դպրոց փոխհարաբերությունների նպատակը հանդիսանում է ծնողի ինտեգրումը կրթական գործընթացին՝ ընտանիքին ներգրավելու համար հատուկ պայմանների ստեղծման ճանապարհով: Այդ նպատակին կարելի է հասնել, ինչպես հեղինակն է նշում, հետևյալ խնդիրների լուծմամբ.

- փոխադարձ տեղեկատվության ապահովում
- ընտանեկան և դպրոցական կրթության համադրում
- ընտանիքի և դպրոցի համատեղ գործունեություն

Ընտանիք - դպրոց փոխհարաբերության ժամանակակից ձևերն ու մեթոդները շատ են: Այստեղ կանդրադառնանք դրանցից մի քանիսին:

Ծնողական ժողով - ամենատարածված և արդյունավետ ձևը սովորողների ծնողների հետ փոխհարաբերություններում: Ժողովը կազմակերպվում և անցկացվում է պարբերաբար՝ կախված սովորողների տարիքից: Ծնողական ժողովի թեման ու մեթոդաբանությունը պետք է արտահայտի սովորողների տարիքային առանձնահատկությունները, ծնողների կրթվածության և հետաքրքրվածության մակարդակը, դաստիարակության նպատակներն ու խնդիրները:

Հաջողված է այն դասարանը, որի ղեկավարը հաճախակի հրավիրում է ծնողական ժողովներ, ներկայացնում է սովորողների առաջընթացի մասին, քննարկում սովորողի հետ կապված ցանկացած հիմնախնդիր: Ծնողական ժողովները մերձեցնում են ուսուցիչներին և ծնողներին, ընտանիքին մոտեցնում են դպրոցին, օգնում որոշել երեխայի կրթության վրա ազդելու ամենաօպտիմալ ուղիները: Հանդիպումների ժամանակ ծնողները համակարգված կերպով ծանոթանում են ընտանիքում և դպրոցում երեխաներին դաստիարակելու խնդիրներին, բովանդակությանը, ձևերին և մեթոդներին: Ծնողական ժողովները կարող են կառուցվել տարբեր ձևերով:

Դասախոսություն - ծնողական դասախոսությունները նպաստում են ծնողների մանկավարժական մշակույթի զարգացմանը, նրանց մանկավարժահոգեբանական պատրաստվածությանը ընտանեկան դաստիարակության մեջ, ընտանիքի և ուսումնական հաստատության մոտեցումների միավորմանը երեխաների դաստիարակության հարցում:

Համաժողով – ծնողական համաժողովները, որոնք կարող են լինել և համադպրոցական և համադասարանական, մեծ դեր և նշանակություն ունեն դպրոցի դաստիարակչական աշխատանքներում: Ծնողական համաժողովները պետք է քննարկեն հասարակական հրատապ խնդիրները, որի ակտիվ անդամները պետք է լինեն նաև երեխաները:

Բաց դաս – բաց դասերը հիմնականում կազմակերպվում են ծնողներին առարկայական նոր ծրագրերին, դասավանդման մեթոդներին, ուսուցչի պահանջներին ծանոթացնելու նպատակով:

Անհատական թեմատիկ խորհրդատվություններ – տեղեկատվության փոխանակման միջոցով իրական պատկերացում կազմելն է դպրոցական գործերի և երեխաների պահվածքի ու խնդիրների մասին: Անհատական խորհրդատվությունները պետք է ունենան ճանաչողական բնույթ և նպաստեն ծնողների ու ուսուցիչների միջև լավ հարաբերությունների հաստատմանը:

Ծնողական կոմիտե – ուսուցչի հենարանը , որի հետ ճիշտ համագործակցության դեպքում նրանք միասին կլուծեն մի շարք ընդհանուր խնդիրներ:

Ծնողական ակումբ – ակումբի նպատակը պետք է լինի դաստիարակության հարցերի քննարկման նկատմամբ ծնողների հետաքրքրվածությունը:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ ուսուցչի համագործակցությունը ծնողների հետ գիտակցված նպատակային գործունեությունն է, ցանկությունը՝ միանալու ծնողների հետ շփմանը ոչ միայն որպես մասնագիտական պարտք, այլև հետաքրքրված գործընկեր՝ միմյանց փոխլրացնող երեխայի դաստիարակության հարցում:

Ի՞նչ է հաջողված ծնողների ներգրավվածությունը

Ծնողի հաջողված ներգրավվածություն կարելի է հասկանալ որպես ծնողի ակտիվ, կանոնավոր մասնակցություն իր զավակի կրթությանը: Ներգրավվածություն կարող է և տանը լինել, երբ ծնողը երեխաների հետ միասին կարդում է, օգնում է տնային առաջադրանքը կատարելիս և քննարկում է դպրոցի ընթացիկ հարցերը: Որոշ դպրոցներում ծնողը կարող է կամավոր մասնակցություն ունենալ դասարանի գործերում: Նման դպրոցները ծնողների հետ պարբերաբար համագործակցում են և նրանց ներգրավում ուսումնական գործընթացի մեջ:

Ի՞նչ է ծնողների ներգրավվածության արգելքը

Հաճախ դպրոցները ծնողներին չեն ներգրավում իրենց գործունեության մեջ, մտածելով, որ նրանք գլուխ չեն հանի դրանից: «Սա արդեն նախնական սխալ կարծիք է: Ուսուցիչները գտնում են, որ ընտանիքները չեն ցանկանում մասնակցություն ունենալ, այնինչ, իրականում ընտանիքները չգիտեն ինչպես մասնակցել» հայտարարեց Կարեն Սալինասը (դպրոցի, ընտանիքի և հասարակության հետ գործընկերության կենտրոնի կապերի տնօրեն, Ջոն Հոպկիսի համալսարան, դպրոցում ծնողների ներգրավվածությանը ամենաազդեցիկ աջակցողներից մեկը):

Իր հերթին ծնողները երբեմն ձեռնպահ են մնում դպրոցի կյանքին ներգրավումից, քանի որ նրանք ազատ ժամանակ քիչ ունեն կամ, որովհետև նրանք լավ չեն խոսում վրացերեն, ինչպես նաև մեծ հիմնախնդիր է հաղորդակցման պակասը դպրոցի և ընտանիքի միջև: Ծնողները գտնում են, որ նրանց դպրոցում սիրով չեն սպասում: Սա, մասնավորապես, հաճախ բացասական փորձի հետևանք է, որը մտածելու տեղիք է տալիս, որ ծնողի ներգրավվածությունը դպրոցական կյանքին դրական արդյունք չի տալիս:

3. Համագործակցության սեփական փորձը

Ելնելով վերը նշված դրույթներից, ականավոր մանկավարժների հետազոտություններից, ցանկանում եմ նկարագրել իմ անձնական հետազոտությունը, որի արդյունքում բացահայտվեց իմ դասավանդած դասարաններից մեկում սովորող աշակերտի մոտ շատ լուրջ խնդիր և ծնող-

ուսուցիչ-մասնագետ համատեղ աշխատանքի արդյունքում ունեցանք մեծ ձեռքբերում: Նկատելով իմ աշակերտներից մեկի մոտ չափազանց ագրեսիվ վարքագիծ, որը արտահայտվում էր հուզական անկայուն վիճակներով, սկսեցի կատարել դիտարկումներ,հավաքել երեխայիմասին տեղեկություններ, աշխատել ծնողի և մասնագետի հետ, ինչի արդյունքում պարզվեց,որ երեխայի ընտանիքում կան խնդիրներ, որոնք էլ արտահայտվում ենրա վարքի և հուզական ոլորտի: Սակայն միայն ախտորոշումը իմանալը բավարար չէր,հարկավոր էր ուսումնասիրել խնդիրը, դրա առանձնահատկությունները,տեղեկանալ դրանից բխող հնարավոր դժվարությունների մասին, քանի որ վարքային և հուզական խանգարումները անմիջականորեն ազդում էին երեխայի ուսումնական պրոցեսի վրա: Դասերի ժամանակ երեխայի մոտ նկատվում էր,որ նա՝ունի ագրեսիվ վարքագիծ դասընկերների նկատմամբ: Այս հետազոտություններից հետո ծնողին հրավիրեցի դպրոց, զրուցեցինք, գտանք երեխայի հետ աշխատելու ուղիներ:

Կրթությունը առավել մատչելի դարձնելու համար մասնագետի հետ մշակեցինք ռազմավարություններ. սովորողին տրամադրել լրացուցիչ ժամանակ ուսումնական նյութը յուրացնելիս, պիտի կիրառվեն պլանավորված գործողությունների կատարման արձանագրման անհատական օրագրեր, հնարավորություն տալ աշակերտին լինել որևէ գործողության պատասխանատու: Ծնողի հետ խորհրդատվության ժամանակ որոշեցինք,որ ծնողը պիտի բացառի երեխայի. գերծանրաբեռնվածությունը, ձեռք բերի նրա վստահությունը: Կատարված աշխատանքների և եռակողմ համատեղ աշխատանքի ընթացքում երեխայի մոտ նկատվեց դրական փոփոխություն:

Եզրակացություն

Ուսուցիչները և ծնողները ունեն ընդհանուր նպատակներ և առանց նրանց համագործակցության ուսուցումն ու դաստիարակությունը լիարժեք լինել չեն կարող:

Ընտանիքի և դպրոցի համագործակցությունը գնալով ավելի արդիական և պահանջված է դառնում:

Թեմայի հետազոտության արդյունքում հանգել ենք հետևյալ եզրահանգումներին.

- ✓ Ուսուցչի, սովորողի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի համագործակցությունը բավականին պատասխանատու և կարևոր գործընթաց է: Կողմերը պետք է քաջ գիտակցեն, որ իրենց համագործակցության հիմքում կրթության առաջնային շահերի՝ սովորողների սովորելու իրավունքի իրականացումն է:

- ✓ Կողմերի համագործակցությունը պետք է հիմնված լինի մարդկային բարձր ու բարոյական որակների վրա:

- ✓ Հարկավոր է հաճախակի ծնողական ժողովներ, դասախոսություններ, համաժողովներ, բաց դասեր, անհատական խորհրդատվություններ, ծնողական ակումբներկազմակերպել և իրականացնել, որպեսզի հնարավոր լինի մշտադիտարկել կրթական հնարավոր խնդիրներն ու սովորողների՝ տարիքային առանձնահատկություններով պայմանավորված վարքային շեղումներն ու գտնել միասնական լուծման տարբերակներ:

Գրականություն

1. Ծնողների ներգրավվածությունը, PE_GUIDE_Armenian.pdf
2. Современные формы и методы педагогического взаимодействия школы и семьи учащегося начальных классов, Ярлыкова А.Л
3. Вячеславовна А. Ю. Диагностика и коррекция эмоционально-волевой сферы детей

из неблогополучных семей.